

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՒԲԻԿ ԿԱՐԱՅԱՄՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

30.12.2014



Սիրելի հայրենակիցներ, ավարտվում է 2014 թվականը, որը մեզ համար ամենից առաջ աշխատանքի, արարման տարի էր:

Մեր երկիրը էլ ավելի առաջ գնաց մեր ջանքերով, գյուղացու չարչարանքով ու մանկավարժի վաստակով, բժշկի նվիրումով ու գիտնականի մտքի թռիչքով, ձեռնարկատիրոջ համառությամբ:

Անշուշտ, Ամանորն իր հետ բերում է նոր հույսեր, նոր սպասումներ ու ծրագրեր: Թող 2015-ը խի՛նդ ու երջանկություն, նոր եռանդ ու երազանք պարզևի բոլորին, նոր ձեռքբերումներով պսակի յուրաքանչյուրիս ջանքերը:

Թող Ամանորի թարմ շունչը մտնի յուրաքանչյուր ընտանիք, որտեղ տղետլ գիտեն հանուն զավակների, որտեղ հարգել գիտեն ու մեծարել: Որտեղ գիտեն ներել ու նվիրվել: Որտեղ կարողանում են սահման ու Հայրենիք պաշտպանել: Մեր հայրենիքի պաշտպանը՝ հայկական բանակը, էլ ավելի հզորանա, միշտ մնա անպարտելի և անխոցելի:

Մենք մտնում ենք նոր տարի՝ նոր հույսերով և մեծ ակնկալիքներով: Համոզված եմ, որ ունենալու ենք հաջողություններ և ձեռքբերումներ բոլոր ասպարեզներում:

Սիրելի հայրենակիցներ, շնորհավորում եմ Ձեզ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ: Մաղթում եմ երջանկություն, առողջություն ու լավատեսություն: Թող Նոր տարին ապահովություն ու խաղաղություն, աշխատանք և բարօրություն բերի մեր ընտանիքներին, յուրաքանչյուրիս:

Շնորհավոր Նոր տարի:

*Ռուբիկ Աբրահամյան
ՀՀ Արարատի մարզպետ*